ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«18» հունիսի 2020թ.
No 101

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 26.03.2020 թվականի թիվ 4123801 ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀՀ վարչական դատարանում քննվում է թիվ ՎԴ/2268/05/20 վարչական գործն ըստ հայցի «Դոն Ֆիշ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 08417888/ ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 26.03.2020 թ. թիվ 4123801 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ:

Ակտի կայացման հիմքում դրվել է Ընկերության կողմից ՀՀ կառավարության 05.10.2017 թ. թիվ 1318-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների 22-րդ կետի 1-ին մասի և 23-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքը: Խախտման փաստն արձանագրելուց անմիջապես հետո, մինչ 26.03.2020 թ. թիվ 4123801 ակտի կայացումը՝ 10.03.2020 թ. Ընկերության կողմից կատարվել են խախտումը վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործով 25.01.2019 թ. թիվ 6/12 որոշմամբ անվավեր է ճանաչել վիճարկվող ակտը՝ նկատի ունենալով, որ ՀԴՄ մուտքագրված գումարն արտացոլվել է Ընկերության ֆիսկալային հասույթում, ինչպես նաև գնումից հետո Ընկերության կողմից կատարվել են համապատասխան

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գործողություններ, ինչի արդյունքում տրամադրվող ՀԴՄ կտրոններում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր վավերապայմանները:

Հիմք ընդունելով նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի որոշումները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել թիվ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 26.03.2020 թվականի թիվ 4123801 ակտը:
2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատիրոջը իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ * ԶԵԿՈՒՅՑ ԿՅԱՆՔՈՎ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am